

Տեղեկանք . Հովանավորման ծախսերի աղյուսակ

Immigration, Refugees and Citizenship Canada-ն (IRCC) մշակել է Հովանավորման ծախսերի աղյուսակ, որի նպատակն է՝ հովանավոր խմբերի ն ծախսային գնահատում տրամադրել մեկ փախստակ անընտանիքի 12 ամիս օժանդակություն ապահովելու համար պահանջվող ֆինանսական ռեսուրսները վերաբերյալ : Հաշվի առնելով Կանադայի տարբեր շրջաններում կենսապահովման ծախսերի մակարդակների տարբերությունը՝ այս աղյուսակը ֆինանսական ուղեցույցի դեր ունի նընդհանուր առմամբ հենվում է սոցիալական աջակցություն գոյություն ունեցող սակագների վրա:

Հովանավորման ծախսերի աղյուսակ

Հովանավորման ծախսերի՝ ստորև ներկայացվող աղյուսակները վերցվել են IRCC-ի՝ Փախստակների հովանավորման դիմումի փաթեթում ներկայացված Ֆինանսական ուղեցույցից : Այս ծախսերի տվյալները թարմացվել են 2014 թ. մարտին : Ամենաթարմ տվյալները համար խնդրում ենք այցելել [IRCC-ի կայքը](#) :

Ընտանիքի անդամների թիվը	Եկամտային 12-ամսյա աջակցություն	Մեկնարկային ծախսերը	Բնականության հաստատման գնահատված տարեկան ծախսը (\$)
1	9,800	2,800	12,600
2	16,800	4,400	21,200
3	17,700	5,300	23,000
4	20,000	7,000	29,700
5	22,500	7,200	29,700
6	24,500	8,000	32,500
Յուրաքանչյուր հավելյալ անդամ	1,550	1,000	2,500

Մեկնարկային ծախսերը

Մեկնարկային ծախսերը ներառում են մեկանգամյա վճարում հետևյալի համար .

- Կենցաղային ապրանքներ
- Կահույք
- Սպիտակեղեն
- Հիմնական սննդամթերք
- (Ձմեռային) հագուստ
- Կոմունալ ծառայությունների համար գրավագումար
- Հեռախոսի տեղադրում

- Առաջին ամսվա բնակավարձ

Եկամտային ազակցություն

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս թվերը գնահատումներ են, և անհրաժեշտ նվազագույն գումարի ուղեցույց են հանդիսանում: Բնակարանային, սննդի և փոխադրամիջոցի ծախսերը կարող են տարբեր լինել՝ ըստ ընտանիքի անդամների տարիքի և բնակավայրի:

Ապրանքային մասհանման աղյուսակ

Ապրանքի տեսքով արվող նվիրատվությունները կարող են նաև նվազեցնել պահանջվող ֆինանսական միջոցներին չափը: Ստորև ներկայացվող աղյուսակը տրամադրվել է IRCC-ի կողմից, իբրև ապրանքի տեսքով արվող մի շարք նվիրատվություններին արժեքային գնահատում, ըստ ընտանիքի անդամների թվի: Այս մոտավոր թվերը հիմնված են տարեկան ծախսերի վրա, և ժամանակի հետ կարող են փոփոխվել: Թվային ամենաթարմ տվյալներին համար խնդրում ենք այցելել IRCC-ի կայքը:

Ընտանիքի անդամների թիվը	Կացարան	Հագուստ	Կահույք	Մեկնարկային ծախսեր (կենցաղային կարիքներ)	Դպրոցի մեկնարկային ծախսեր	Հիմնական սննդամթերք
1	6,000	500	1,500	325		175
2	7,100	1,000	2,000	350		250
3	7,800	1,375	2,500	375		325
4	8,400	1,750	3,000	400		400
5	9,600	2,125	3,500	425		475
6	9,600	2,500	4,000	450		550
Յուրաքանչյուր հավելյալ անդամի համար ավելացնել	900	375	500	25	Յուրաքանչյուր 4-21 տ. երեխայի համար 150	75

Ֆինանսական միջոցները, որոնք յուրաքանչյուր փախստական ընտանիքի հետ Կանադա է բերում, կարող են նվազեցնել հովանավոր խմբի տրամադրելի ֆինանսական ազակցություն անպահանջվող գումարը: Այնուամենայնիվ,

խնդրում ենք նկատի ունենալ, որ պահեստային տարբերակ, մինչև նույն է, անհրաժեշտ է ունենալ:

Սոցիալական օժանդակություն տեղական չափանիշները

Ձեր բնակավայրում սոցիալական օժանդակություն տեղական չափանիշներին ծանոթանալը ևս կարող օգնել Ձեր խմբին՝ պլանավորել Ձեր ամսական դրամական նպաստներն ու բյուջեները: Այդ թվերը նաև օգտագործվում են IRCC-ի կողմից՝ պետական օժանդակություն ստացող փախուտականներին **Resettlement Assistance Program (RAP)** նպաստները սահմանելու նպատակով: Սոցիալական օժանդակություն կամ եկամտի աջակցություններ կա չափանիշները ճշտելու համար խնդրում ենք դիմել Ձեր նահանգային կամ տարածքային կառավարման մարմիններին:

Refugee Sponsorship Training Program

Հեռ . 416.290.1700, 1.877.290.1701

Ֆաքս ` 416.290.1710

Էլ . փոստ ` info@rstp.ca

Կայք ` www.rstp.ca

Վեբ ջի ն թարմացումը ` 2014 թ . մարտին